

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2019թ. հոկտեմբերի 28-ի նիստի

Խորհրդի 41 անդամներից ներկա էին 30-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### ՕՐԱԿԱՐԳ

1. Հոբելյան:
2. Գիտական հաղորդում՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության հիմնադրույթների գիտագործնական ասպեկտներով վերլուծություն (զեկ.՝ ի.գ.դ., պրոֆ. Գ.Դանիելյան):
3. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Հովհաննիսյան):
4. Հաղորդում առկա ուսուցմամբ բակալավրիատի 4-րդ կուրսի, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների՝ համապատասխանաբար դիպլոմային և աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների և դեկավարների հաստատման մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):
5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ս.Բարսեղյանի 80-րդ տարեդարձի կապակցությամբ շնորհավորանքներ ԵՊՀ ռեկտորի և իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից:

ԵՊՀ ռեկտորի անունից իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ս.Բարսեղյանի 80-րդ տարեդարձի կապակցությամբ շնորհավորանքներով հանդես եկավ ԵՊՀ գիտական խորհրդի քարտուղար Լ.Հովսեփյանը: Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անունից Ս.Բարսեղյանին շնորհավորանքի ջերմ խոսքեր հայտնեց դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը: Շնորհավորանքներով հանդես եկան նաև ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր Ս.Առաքելյանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Ե.Խունդկարյանը, իրավ.գիտ. թեկնածու, դոցենտ Դ.Ավետիսյանը, ի.գ.դ., պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

**2. ԼՍԵՑԻՆ.** Գիտական հաղորդում՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության հիմնադրույթների գիտագործնական ասպեկտներով վերլուծություն (զեկ.՝ Ի.Գ.Դ., պրոֆ. Գ.Դանիելյան):

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Ղազիսյանը, դոց. Ա.Ղազիսյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հաղորդումն ընդունելի գիտությունը (հաղորդումը կցվում է):

**3. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Հովհաննիսյան):

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Հովհաննիսյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում իր ղեկավարած ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվետվությունը գնահատելի դրական (հաշվետվությունը կցվում է):

**4. ԼՍԵՑԻՆ.** Հաղորդում առկա ուսուցմամբ բակալավրիատի 4-րդ կուրսի, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների՝ համապատասխանաբար դիպլոմային և աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման մասին:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնների վարիչները կարճ հաշվետվություն ներկայացրին բակալավրիատի 4-րդ կուրսի, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների՝ համապատասխանաբար դիպլոմային և աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Կ.Գևորգյանը, Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ա.Հայկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել բակալավրիատի 4-րդ կուրսի, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների՝ համապատասխանաբար դիպլոմային և աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին:

**5. Ընթացիկ հարցեր**

**5.1 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ «Քաղաքացիական իրավունք 1» առարկայի առաջին ընթացիկ ստուգման գրավոր ձևի վերանայման մասին:

Ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ավետիսյանը ներկայացրեց, որ 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կուրսում ընթացիկ ստուգումը որոշվել է անցկացնել բանավոր, քանի որ «Քաղաքացիական իրավունք 1» առարկան ներառում է ընդհանուր դրույթներ, հասկացություններ, ուստի տրված գիտելիքները և ուսանողների հետ կազմակերպված աշխատանքները հնարավորություն չեն տալիս կազմակերպել գրավոր արդյունավետ քննություն:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դոց. Ա.Մարգարյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հաստատել «Քաղաքացիական իրավունք 1» առարկայի առաջին ընթացիկ ստուգման անկացման բանավոր ձևը:

**5.2 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Գևորգ Պողոսյանի՝ «Ոչ առևտրային կազմակերպությունները՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Գևորգ Պողոսյանի՝ «Ոչ առևտրային կազմակերպությունները՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

**5.3 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Շուշանիկ Ղուկասյանի՝ «Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Շուշանիկ Ղուկասյանի՝ «Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

**5.4 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Ք.Վարդանյանի և Գ.Եզանյանի՝ «Միգրացիոն գործընթացների միջազգային իրավական և ներպետական կարգավորումը» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Ք.Վարդանյանի և Գ.Եզանյանի՝ «Միգրացիոն գործընթացների միջազգային իրավական և ներպետական կարգավորումը» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

**5.5 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ Նելլի Աղաբաբյանի՝ «Անչափահասների գործերով վարույթի իրավական և տեսական հիմքերի զարգացումը ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ Նելլի Աղաբաբյանի՝ «Անչափահասների գործերով վարույթի իրավական և տեսական հիմքերի զարգացումը ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթում» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուլջան*

## Գիտագործնական վերլուծություն

### *„ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության վերաբերյալ*

Ըստ „ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության (այսուհետ նաև՝ ռազմավարություն)՝ կազմվել են երեք գործողությունների ծրագրեր՝ *կարճաժամկետ* (2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2020 թվական), *երկարաժամկետ* (2021 թվականից մինչև 2023 թվականը) և էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման վերաբերյալ առանձին գործողությունների ծրագիր (2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2023 թվականը):

Նախ, սկսենք լավ լուրից, ըստ որի՝ Ռազմավարության և, հատկապես, ՀՀ դատական օրենսգիրքի սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծերի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը, որոշ բացառություններով հանդերձ, բարձր գնահատական է տվել: Այս կարևոր փաստը ներկայումս լայնորեն լուսաբանվում է, ինչը ողջունելի է, քանզի վերջապես հանրային իշխանությունները ոգևորված են միջազգային այդ խորհրդատվական կառույցի իրավական դիրքորոշումներով: Մնում է հուսալ, որ այսուհետ չենք ունենա երկակի վերաբերմունք և մեր ոգևորությունը պայմանավորված չի լինի սոսկ իրավիճակային գնահատականներով:

Բայց ամբողջ խնդիրն այն է, որ նույն *Վենետիկի հանձնաժողովը նույնպես գերազանց է գնահատել այս պահին գործող „ՀՀ դատական օրենսգիրքի սահմանադրական օրենքը*: Համոզված եմ, որ դարձյալ որոշ վերապահումներով, գերազանց են գնահատվելու նաև հաջորդիվ բոլոր հնարավոր նախագծերը: Ասել կուզի, իրավական բարեփոխումների գործընթացը բոլորովին այլ իրավաքաղաքական չափանիշներով է ուրվագծվում, և միջազգային փորձագիտական ցանկացած կառույց իրեն թույլ չի տա ընդհանուր գծերով բացասական տեսակետ հնչեցնել, եթե սկզբունքորեն չեն շրջանցվում միջազգային իրավական չափանիշները: Իսկ դիտողությունները կամ նկատառումները ողջամտորեն ձևակերպվում են դասական դիվանագիտական լեզվառճով, ուստի իրավասու կառույցների խնդիրն է համարժեք ընկալել այդ ամենը և հետևություններ անել:

***Այսպիսով, դատաիրավական բարեփոխումների առանցքային թիրախները ոչ այնքան իրավական տարաբնույթ լուծումներն են, որքան քաղաքական կամքի ու դատական իշխանության անկախության երաշխավորման դե ֆակտո գործոնների առկայությունը:***

Վերջին հաշվով, ներկայիս հանրային ինքնագիտակցությունը, ցավոք, հակված է ոչ թե սկզբունքորեն անկախ դատարաններ ու Բարձրագույն դատական խորհուրդ ունենալուն, այլ այնպիսի դատարանների, որոնք յուրային են, համարժեք են ընկալում ինչ-որ

տեղ նաև հեղափոխական պահանջները և լռելյայն կղեկավարվեն դրանցով: Ինքնուրույն, անկախ կարող է համարվել ու պաշտպանության կարիք ունենալ միայն այնպիսի դատավորը, որը հասկանում է այս ,պարզ ճշմարտությունը:

Չարգացնելով միտքս, կամենում են ընդգծել, որ ցանկացած ինստիտուցիոնալ բարեփոխումներից առաջ, նախ, մենք բոլորս պարտավոր ենք հոգալ, որպեսզի լրջորեն վերանայվի հանրային իրավական մշակույթը, նրանում արմատախիլ լինեն դատարանների կողմից արդարադատության իրականացմանը խմբովի մասնակցելու անթույլատրելի ձգտումները: ***Հարկ է այդ իրավական մշակույթը հետևողականորեն ուղղակի ներդնել նաև ոչ միայն գործադիր ու իրավապահ համակարգի պաշտոնյաների, այլև արդեն խորհրդարանի պատգամավորների գիտակցության մեջ, քանզի պատգամավորները ևս իրենց պատկերացնում են դատարանակազմության և դատավարական գործընթացի անմիջական մասնակիցների, ուղղորդողի դերում:***

Դատաիրավական ռազմավարության առանցքային նյութը, ըստ շրջանառության մեջ դրված փաստաթղթերի, կոռուպցիոն երևույթների կանխարգելում է, ընդ որում, այնպիսի կառուցակարգերով, որպեսզի հրնթացս էլ ավելի բարելավվի դատական իշխանության անկախությունը: Այս շրջանում, ինքս խիստ ողջունելի կհամարեի և ակնկալում էի, որ օրենսդրական հարթությամբ վերջապես հստակ արգելքներ սահմանվեին պաշտոնյաների կողմից դատական ակտերը գնահատելու, դատարանների նկատմամբ հանրային վստահության վերաբերյալ իրենց անձնական պատկերացումները որպես փաստ բարձրաձայնելու համար, և բնականաբար, ամրագրվեին պատասխանատվության համաչափ միջոցներ: Խոսքը նաև դրական գնահատականների մասին է, քանզի ***ցանկացած գնահատական արդեն իսկ ապօրինի միջամտության ցուցիչ է, քանզի գնահատել, նշանակում է վերադասի կերպարի մեջ տեղավորվել:***

Ընդհանրապես, հիմնավորված ու տրամաբանական կլիներ՝ նախկինում պաշտոնավարած դատավորների ու իրավապահ մարմիններում աշխատած անձանց նկատմամբ համատարած անվստահության պարագայում առաջնահերթ համարվեր առնվազն ***յուստրացիա*** նախաձեռնելը: Այս ինստիտուտի մասին խոսում են մշտապես, բայց այդպես էլ փորձ չի արվում այն կենսագործել, ինչը մտահոգության տեղիք է տալիս այդ կոչերի խորքայնության մասին: Նկատենք, որ անգամ Գերմանիայում՝ երկու պետությունների միավորումից հետո, կիրառվեց յուստրացիա, ինչի արդյունքում այդ մարդկանց պարզապես արգելվեց աշխատել որոշ տեսակի հանրային ծառայություններում, ի տարբերություն՝ մերձբալթյան երկրների, որոնք ոչ իրավաչափորեն սկզբնապես ընդհանրապես արգելել էին զբաղվել որևէ աշխատանքով, ինչը խիստ դատապարտվեց ՄԻԵԴ-ի կողմից:

Ռազմավարությունն ունի դրական որոշակի կողմեր, մասնավորապես դրանում տեղ են գտել վերջին շրջանում նաև Բարձրագույն դատական խորհրդի և, ընդհանրապես իրավագետների կողմից պաշտոնապես ներկայացված դիրքորոշումները, հարստացված են

մի շարք նորամուծություններով և այլն: Մեծ հաշվով, այս փաստաթուղթը միայն մասամբ է բավարարում ռազմավարության պահանջներին, դրանում խիստ ընտրանքային, միակողմանի ու սահմանափակ է ներկայացված արդեն իսկ կատարված աշխատանքը, ինչը հնարավորություն կտար պարզելու նորամուծությունների, եթե դրանք իսկապես նորամուծություն են, անհրաժեշտությունը: Միաժամանակ կան խիստ մտահոգող ասպեկտներ, մասնավորապես՝

ա) Ռազմավարությունն անհարկի քաղաքականացված է, դրանում կան բազում իրավական ակտին ոչ բնորոշ քաղաքական գնահատականներ, որոնք չեն ուղեկցվել կոնկրետ հետազոտական նյութերով,

բ) դրանում անթույլատրելի շատ են վերացական դրույթները, մասնավորապես, կոնկրետություն պահանջող հարցադրումների կտրվածքով նախապատվությունը տրվել է ,անհրաժեշտ է վերանայել, ,կուսումնասիրվեն և կբացահայտվեն խնդիրները և կառաջադրվեն լուծումներ և նմանաբնույթ արտահայտությունների (ակնհայտ է, որ Ռազմավարություն մշակվում է արդեն իսկ բացահայտված խնդիրները լուծելու ակնկալիքով),

գ) առկա են ակնհայտ հակասական դրույթներ, օրինակ՝ մի կողմից խոսվում է Փաստահավաք խմբի այնպիսի կարգավիճակի մասին, որը աղերսներ չի ունենալու արդարադատության գործառույթի հետ, մյուս կողմից՝ վերջինս անգամ իրավասու է լինելու անձեռնմխելիություն շնորհել որոշ անձանց,

դ) Ռազմավարությունում անչափ շատ են գուտ տեխնիկական լուծում պահանջող հարցադրումները, մինչդեռ՝ անտեսված են բազում առանցքային ու բովանդակային հարցադրումներ,

ե) բացակայում է արդեն իսկ կատարված, առնվազն մշակված օրինագծերի առկայության մասին որևէ տեղեկատվություն, օրինակ՝ խոսվում է քրեական, քրեական դատավարության, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության բարելավման, մասնավորապես նոր օրենսգրքեր ընդունելու մասին, սակայն անտեսվում է այն հանրահայտ փաստը, որ դրանց նախագծերն արդեն պատրաստ են և այլն:

Մինչ կոնկրետ նկատառումներին անցնելը, անհրաժեշտ էմ համարում նկատել, որ բարեփոխումների մի շարք ծրագրային դրույթներ նաև իմ առաջարկությունների արտացոլում է: Մասնավորապես, առաջարկությունների փաթեթը հանձնել էմ վարչապետին և միաժամանակ, ընդգծել, որ ամեն մի նախաձեռնություն կարող է կյանքի կոչվել և երաշխավորել ակնկալվող արդյունք, եթե այն իրականացվում է անարատ, չխեղաթյուրված կանոններով:

Հակրիճ ներկայացնեմ մի քանի նկատառումներ՝

- նախ, օրակարգային հարց է պետական համակարգում պետական ծառայողների կողմից իրավական բարեփոխումների հայեցակարգեր, օրինագծեր մշակելու արատավոր պրակտիկայից ձերբազատվելու անհրաժեշտությունը: Սկզբունքորեն պետական ծառայությունն անհամատեղելի է օրինաստեղծ գործունեության վաղ փուլի, այն է՝ նախագծերի մշակման և փորձաքննության հետ: Ներկա կառուցակարգերն ի գործու չեն ապահովելու ինչպես անհրաժեշտ որակ, այնպես էլ անկաշկանդ քննարկումներ: Վերջին հաշվով, Կառավարության համակարգից դուրս եկող ցանկացած նորմատիվ ուղղվածության փաստաթուղթ ընկալվում է իբրև Կառավարությանն աջակցելու նկատառումով այն ամեն գնով գովաբանելու ենթակա երևույթ՝ դրանից բխող անընդունելի հետևանքներով հանդերձ: Ցանկացած քննդատական խոսք ընկալվում է, որպես առնվազն հակահեղափոխություն և արժանանում արտաքուստ ուղղորդված հայեցողության:

Չեմ կարծում, որ որևէ մեկը կասկածում է, որ մոտակա ժամանակներում լավագույն մասնագետները բնավ չեն նախընտրելու պետական համակարգը, որքան էլ դրանում առանձին պաշտոններ գրավիչ լինեն զուտ բարձր աշխատավարձով,

- տևական ժամանակ է, ինչ խոսվում էր, այսպես կոչված, *անցումային արդարադատության* մասին, մինչդեռ՝ որպես այդ խնդրի կառուցակարգային գրավական է համարվել Փաստահավաք հանձնաժողովի ստեղծումը, որը պետք է զբաղվի 1991-2018 թթ. Հայաստանում տեղի ունեցած էական խախտումների վերաբերյալ փաստերի հավաքագրմամբ: Նկատենք, որ փաստեր հավաքագրելն ինքնին որևէ աղերս չունի արդարադատության հետ, այն սուկ բացահայտ գործիք է որոշ չափանիշներին չբավարարող դատավորների լիազորությունը դադարեցնելու համար: Ընդ որում, հրնթացս շրջանառության մեջ դրված նախագիծը ապացույցն էր այն բանի, որ եթե օրինակ ՄԴ-ի պարագայում նույն այդ դատավորները կամավոր հրաժարականներ ներկայացնեին, նրանց համար կնշանակվեին վաղ կենսաթոշակներ և այլ սոցիալական աջակցության նպաստներ:

Առաջ անցնելով նկատեմ, որ վաղ կենսաթոշակի գաղափարն աղավաղված է ընդհանրապես, ինչին չի անդրադարձել նաև Վենետիկի հանձնաժողովը, քանզի վերջինս բավարարվել է բացառապես իրեն ներկայացված նախագծով: Խնդիրն այն է, որ այդ կարող է վաղ կենսաթոշակի գաղափարը ներդրվել, առնվազն հետևյալ պայմաններով՝

ա) այն տարածվի բոլոր դատական ատյանների դատավորների վրա,

բ) սահմանվի նվազագույն տարիք և նվազագույն պաշտոնավարման ժամկետ,

գ) չամրագրվեն հրաժարականներ ներկայացնելու կոնկրետ ժամկետներ:

Միայն այս լրացուցիչ երաշխիքները կարող են կամավորության հետ զուգահեռ, հիմք հանդիսանալ քաղաքական հետապնդումներից զերծ դատական համակարգ ունենալու համար:

Ինչ վերաբերում է Փաստահավաք հանձնաժողովի կազմին և խախտումների շրջանակի հստակեցմանը, որի շուրջ ներկայումս լայն քննարկումներ են ծավալվում, համարում եմ ոչ էական հարցադրումներ. վերջին հաշվով, անկախ մասնագիտացման որակից, հեղինակության աստիճանից և այլն, անչափ մեծ է վտանգը, որ դա ցանկացած պարագայում լինելու է քաղաքական ուղղվածության կառույց:

Մակայն առավել խնդրահարույց է այդ մարմնի սահմանադրական կարգավիճակը: Ռազմավարությունից բխում է, որ Փաստահավաք հանձնաժողովը՝ 20 անդամով պետք է ձևավորվի արդեն 2020 թ. առաջին եռամսյակի ընթացքում, այսինքն՝ մինչև սահմանադրական փոփոխությունները: Ընդ որում, խոսքն այնպիսի լիազորություններով օժտված մարմնի մասին է, որը որևէ կերպ չի կարող համահունչ լինել Սահմանադրության 122-րդ հոդվածով սահմանված, այսպես կոչված, ինքնավար մարմինների իրավական կարգավիճակի հետ. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ:

Թեպետ, Ռազմավարությունում զուտ խմբագրական կտրվածքով վերապահում է արված առ այն, որ Փաստահավաք հանձնաժողովը չունի իրավապահ կամ դատական մարմնին բնորոշ գործառույթներ, սակայն վերջինիս համար սահմանված են այնպիսի գործառույթներ, որոնք ավելին են, քան իրավապահ կամ դատական մարմնին բնորոշ գործառույթները, մասնավորապես՝ դրանք բնորոշ են օրինաստեղծ մարմնին և քննչական մարմիններին: Այսպես, *Ռազմավարության ուղղությունները վերտառությամբ հատվածում մի շարք այլ լիազորություններից զատ, ամրագրված են հետևյալ լիազորությունները. ... պետական մարմիններից տեղեկություններ պահանջելը, բացատրություններ տալու նպատակով անձանց հրավիրելը, Խախտումներ կատարած ենթադրյալ անձանց կողմից ինքնակամ ներկայանալու և հանձնաժողովի գնահատմամբ՝ էական նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակող բացատրություն տալու դեպքում նրանց հնարավոր քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տալը:*

Այսպիսով, Ռազմավարությամբ նախատեսվում է, որ այս սուկ ինքնավար մարմնի կարգավիճակ ունեցող կառույցը՝ իրավասու է լինելու ինքը որոշել, թե ովքեր են *էական բացատրություն* տալիս, ըստ այդմ էլ՝ վերջնական որոշում կայացնի քրեական հետապնդումից նրանց անձեռնմխելիության վերաբերյալ: Նկատենք, որ անգամ գլխավոր դատախազն իրավասու չէ կայացնելու այսպիսի որոշումներ, քանզի դրանք հանդիսանում են բացառապես օրինաստեղծ գործունեության առարկա, և հիմքում դրվում է ոչ թե կոնկրետ անձը, այլ կարգավիճակը: Հավելենք, որ Ռազմավարությամբ ոչ միայն նախատեսվում է, որ հիշյալ հանձնաժողովը

իրավասու է մշակելու դատարանների գործունեության գնահատման մեթոդաբանություն, այլև ինքն է գնահատելու այդ գործունեությունը. ... *ինչպես նաև դատական և իրավապահ մարմինների գործունեության ուսումնասիրության մեթոդաբանության մշակումը և այդ գործունեությանը գնահատական տալը՝ անդրադառնալով նաև դրանց հիման վրա կոռուպցիոն սխեմաների բացահայտմանը,*

- Փաստահավաք հանձնախմբին է վերապահված նաև կոռուպցիոն բնույթի մի շարք այլ երևույթների բացահայտման առաքելությունը, որոնցից է, օրինակ՝ դատավորների կողմից սեփական փաստաբանական գրասենյակներ տնօրինելու երևույթը: Ընդամենն ամիսներ առաջ ինքս եմ այս հարցը բարձրացրել և քննարկել նաև Հանրապետության վարչապետի հետ, քանզի կարևորում եմ երևույթը: Մակայն այս երույթը սոսկ հարաբերությունների բացահայտմամբ չի կարող սահմանափակվել, քանզի հարկ է օրենսդրությամբ արգելել այդպիսի ընկերություններ հիմնադրելու իրավական հնարավորությունը,

- Ռազմավարության և ներկայումս ընթացող իրավաստեղծ գործունեության միջև ակնհայտ առկա է ներքին անհամապատասխանություն: Այսպես, Ռազմավարությունում խոսվում է միասնական փաստաթղթաշրջանառության և վիճակագրության էլեկտրոնային համակարգ ներդնելու մասին, մյուս կողմից՝ ներկայումս շրջանառության մեջ է դրվել *ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառմանն առնչվող առանձին օրինագիծ*: Ընդ որում, ակնհայտ է, որ որևէ պատշաճ հիմնավորում չի կարող ունանալ այն հարցի պատասխանը, թե ինչու ենք կենտրոնացված հաշվառման նոր համակարգ ներդնելը հրատապ համարում բացառապես ընտանիքում բռնության դեպքերի առնչությամբ, երբ բազում այլ բռնության, ընդհուպ սպանության դեպքերի կապակցությամբ դեռևս նմանաբնույթ քայլ չի արվել, ինչի արդյունքում միևնույն ձեռագրով կատարված սպանության դեպքերն այդպես էլ հաճախ չեն համադրվում, չի բացահայտվում դրանց ընդհանրությունը, իսկ գործերի մեկուսի քննությունը որևէ արդյունքն այդպես էլ, հասկանալի պատճառներով, չի տալիս,

- նկատենք, Ռազմավարությունը անհարկի խիստ սահմանափակ է, ընտրանքային, իսկ հիմքում դարձյալ ավանդույթի ուժով դրված են, հիմնականում, դատական իշխանության մարմինների կառուցակարգային հարցադրումները, մինչդեռ՝ արդար դատաքնության իրավունքը կարող է հավուր պատշաճի երաշխավորվել բացառապես համալիր քաղաքականության արդյունքում:

Այսպես, դատաիրավական բարեփոխումների ողջ ռազմավարությունը իր առանցքային խնդիրը պետք է համարի նաև հանցավորության բացահայտման ակնհայտ անընդունելի վիճակի բարելավման խնդիրը: Տվյալ դեպքում, որևէ արդարացում չունի այն, որ ողջ ուշադրությունը կենտրոնացված է բացառապես կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, այն էլ, հիմնականում, նախկինում կատարված դեպքերի ենթադրյալ բացահայտման և սոսկ գույքի բռնագանձման հարցերի վրա: Ռազմավարությունը,

կարծում եմ, պետք է ունենա նախականիչ նշանակություն, ուրվագծի ծանր հանցագործությունների, այդ թվում՝ սպանությունների ու բազում այլ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ողջ կառուցակարգը և մեթոդաբանությունը: Անընդունելի է, երբ, օրինակ՝ սպանությունների բացահայտումները, չնչին բացառություններով արձանագրվում են դեպքից առավելագույն մեկ ամսվա ընթացքում, այն էլ՝ ակտիվ վկաների շնորհիվ: Այդ ժամկետը լրանալուն պես, հիշյալ քրեական գործերը, ցավոք, անցնում են դանդաղ արխիվացման փուլ, եզակի են այն դեպքերը, երբ բացահայտումները լինում են, ասենք՝ մեկ-երկու տարի անց:

Այս նկատառումով, առնվազն հարկ էր բոլոր այդ բնույթի կասեցված գործերը փոխանցել հատուկ դրա համար ստեղծված արհեստավարժ մասնագետներից բաղկացած հանձնախմբերին, որոնցում նպատակահարմար է ներառել նաև կենսաթոշակի անցած տվյալ գործերի ելքով բացարձակապես չկաշկանդված մասնագետների: Ընդհանրապես, հայրենական իրավական համակարգում իսպառ անտեսված է կենսաթոշակի անցած արհեստավարժ ու բարի համբավ ունեցող կադրերին օգտակար նախաձեռնություններում ներգրավելու պրակտիկան, ինչին խոչընդոտում է նախկին ամեն ինչի նկատմամբ համատարած անվստահության սերմանումը,

- ներկայումս անչափ շատ ու միանգամայն տեղին է խոսվում նախկինում դատապարտված, այդ թվում՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց բողոքների քննության անմխիթար վիճակի մասին: Չի բացառվում, որ անհրաժեշտ բարեփոխումների բացակայության պարագայում այդպիսի գործերի վերաբացումը բացառապես թելադրված լինի քաղաքական կոնյուկտուրայով: Առնվազն անտեսված է, որ այդպիսի գործերով հարկ է արմատապես վերանայել իրեղեն ապացույցների պահպանման կանոնները: Մշակված նախագծում անդրադարձ է արված սպանության դեպքերին, սակայն, կարծում եմ, այն պետք է առավել ընդգրկուն լինի և ներառի նաև այլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները, այդ թվում՝ բռնաբարության դեպքերը: Գիտատեխնիկական զարգացմանը համահունչ, ի հայտ են գալիս նորանոր մեթոդներ, որոնք կարևոր գործիք են իրեղեն ապացույցների միջոցով մեկ անգամ ևս առավել հստակ պատասխան տալու կասկածվող անձի մասնակցության առնչվող հարցադրումներին,

- բարեփոխումների կարևորագույն թիրախը պետք է լիներ իրավաբանի մասնագիտությամբ տարբեր համակարգերում պաշտոնների նշանակելու կամ ընտրելու հնարավորինս միասնական պահանջների ներդրումը: Բացարձակապես իրավաչափ չէ, երբ միևնույն չափանիշներին բավարարող անձը կարող է առանց լրացուցիչ ուսուցման համակարգի դառնալ բարձրագույն դատարանի դատավոր, սակայն փաստաբանի արտոնագրի համար պարտավոր է տևական ժամանակով ուսուցում անցնել: Բազում երկրներում անգամ իրավագիտության թեկնածուի համար նախատեսված են արտոնություններ:

Մյուս կողմից որևէ տրամաբանության չի դիմանում այն, որ անհարկի պարզեցվում, դյուրին են դառնում դատավորի թեկնածուներին ներկայացվող պահանջները՝ նկատի ունենալով առավել նվազ տարիքը վերականգնելը, մագիստրոսի պահանջըն անտեսելը և այլն: Նկատեն, որ այս կտրվածքով միջազգային փորձի վրա հղում անելն առնվազն իրավաչափ չէ: Միջազգային փորձի վրա հղում կարող էր արվել, եթե ֆինանսատնտեսական ասպեկտով բուհերն այնքան ապահովված լինեին, որ կարողանային առնվազն բակալավրի մասնագիտացման պարագայում երաշխավորել ոչ միայն անհրաժեշտ տեսական, այլև գործնական հմտություններ և ունակություններ: Մինչդեռ՝ ինչպես հայտնի է, անհրաժեշտ ձևաչափերով պետական համակարգերում պրակտիկան բացառապես վճարովի է, իսկ պետական բյուջեում էլ այդպիսի ծախս նախատեսված չէ: Իսկ եթե հավելենք նաև բուհական կրթության վերաբերյալ վերջերս շրջանառության մեջ դրված օրինագիծը, այդ ասպեկտով բարեփոխում մոտակա տեսլականում որևէ բան նախատեսված չէ: Կոնկրետ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետին հաջողվում է զուտ անձնական հարաբերությունների կտրվածքով որոշ չափով մեղմել այս սուր խնդիրը, բայց իսպառ լուծելու համար անհրաժեշտ է կոնկրետ պետական աջակցություն:

Բնորոշ է այն, որ եվրոպական երկրների բազում բուհեր իրենց ուսանողներին կարողանում են գործուղել պրակտիկա՝ անգամ միջազգային դատարաններ, ընդհուպ՝ Հաագայի դատարան և այլն:

Այսպիսով, չափանիշների անհարկի մեղմումը հանգեցնելու է նրան, որ բարձր վարձատրվող դատավորի պաշտոնը **հրապուրիչ դառնա սուկ իր մասնագիտությամբ ոչ այնքան փայլող երիտասարդների համար, որոնցով հնարավոր կլինի անարգել համայրել մոտակա շրջանում աննախադեպ տեմպերով աճող թափուր տեղերը**, ինչը հանգեցնելու է արդարադատության որակի աննախադեպ վատթարացմանը: Ինչ խոսք, դեռևս մասնագիտական անհրաժեշտ որակներ և կենսափորձ ձեռք չբերած անձի համար խիստ գրավիչ է բարձր աշխատավարձով աշխատանքը, սակայն ակնկալել անհրաժեշտ որակ և արդյունավետություն, մեղմ ասած, իրատեսական չէ:

Հասկանալի է, որ առաջիկայում սպասվում է դատավորների թափուր տեղերի աննախադեպ մեծ աճ, իսկ գործող բարդ համակարգը թույլ չի տա, որ հնարավորինս այդ տեղերն արագ համալրվեն, սակայն նշված իրավճակում էլքը ոչ թե դատական համակարգ մուտքը սուկ իրավիճակային հարթությամբ դյուրին դարձնելն է, այլ թեկնածուների առաջադրման և ընտրության գործընթացները հնարավորինս թափանցիկ ու իրավաչափ դարձնելը: Այսպես կոչված, գաղտնի քվեարկությունները գործնականում վերածվում են կոլեգիալ անպատասխանատվության, ինչի արդյունքում դուրս են մնում իրավագիտական համայքում միանշանակ ընդունված ու արժանի թեկնածուները: Ինքս կառաջարկեի, որպեսզի վերանար գաղտնի քվեարկությունը, իսկ մինչ այդ, որպես միջանկյալ

տարբերակ՝ գաղտնի որոշումները քննարկման դրվեին նախապես կազմված հիմնավորումներով: Մա հիմք կլինեի նաև դրանք հավուր պատշաճի բողոքարկելու համար, ինչն օրենսդրական լուծում չի պահանջում,

- հստակ չեն նաև քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության օրենսդրության բարեփոխման ուղղությունները: Մասնավորապես, ռազմավարության անհրաժեշտ որակի մասին դժվար է խոսել, երբ որպես նպատակ է ձևակերպվում ինդիքները գույքագրելը և դրանց համար լուծումներ առաջադրելը:

Միաժամանակ, կարծում եմ, հարկ է նկատի ունենալ, որ ՄԻԵԴ-ի ներկայիս իրավական դիրքորոշումների լույսի ներքո հայրենական դատավարության հիմնախնդիրը, թերևս, համարվում է մրցակցության սկզբունքի անհարկի ոչ համարժեք ընկալումը, ինչի արդյունքում անհիմն նվազեցվում է դատարանի միջամտության իրավական հնարավորությունը ինչպես առաջին ատյանում, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների քննության փուլում: Դատավորը, ըստ էության, արդարադատություն իրականացնող մարմնից վերաժվում է սոսկ կողմերի արհեստավարժությունը գնահատող սուբյեկտի, ինչն իր հերթին հանգեցնում է կոռուպցիոն ռիսկերի և արդարադատության էության աղճատմանը,

- խիստ կարևոր է որոշ գործառնություններ, որոնք, ըստ էության, հանրային իշխանության բնույթի հետ աղերսներ չունեն, մասնավոր սեկտորին վերապահելը: Այսպես, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որակի գրավական է համարվում էլեկտրոնային համակարգի բարելավումը, սակայն սա ինքնըստինքյան ենթադրվող գործընթաց է, վերջին հաշվով, ցանկացած ոլորտում էլեկտրոնային կառավարումը չի կարող դոփել իր տեղում, մինչդեռ՝ ոլորտի կարգավորման, մասնավորապես, անհարկի ծանրաբեռնվածությունը մեղմելու իրատեսական ուղին գուզահեռ՝ դատական ակտերի կատարման մասնավոր կառույցների ստեղծումն է: Յուրաքանչյուրի համար պարզ է, որ օրինակ՝ ամենակատարյալ էլեկտրոնային աճուրդը կարող է պաստել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, բայց այն չի կարող ընկալվել իբրև պետական գործառնություն:

Ընդհանրապես բոլոր տեսակի վճարովի ծառայությունները հարկ է վերցնել պետական իշխանության մարմիններից և փոխանցել բացառապես այդ գործունեության ոգուն համահունչ մասնավոր սեկտորին: Մասնավորապես, որևէ մեկը չի կարող դուրս ինչ ընդհանրություն արձանագրել պետական իշխանական գործառնությունների և այնպիսի գործունեության տեսակների միջև, ինչպիսիք են՝ անձնագրերի համար լուսանկարահանումները, պետհամարանիշներ, տարաբնույթ վկայագրեր պատրաստելն ու վաճառելը և այլն: Միջազգային փորձը հուշում է, որ այդպիսի գործունեությունը երբեք ի վերապահվում պետական իշխանության մարմիններին,

- սահմանադրական բարեփոխումների մասով: Նախ, առնվազն հարիր չէ գործող Սահմանադրության առնչությամբ միջազգային կառույցների համահավաք տեսակետը ներկայացնելիս, սահմանափակվել բացառապես Թրանսփերենսի ինթերնեյշնլ

հակակոռուպցիոն կենտրոնի զեկույցով: Բայց սա խնդրի մի կողմն է: Առավել էական կողմն այն է, որ, եթե Ռազմավարության հեղինակները կողմնակից են եղել նույն այդ ՀԿ-ի դիրքորոշման հետ, ապա սահմանադրական բարեփոխումների խնդիրը պետք է դիտարկվեր առաջնահերթ, այսինքն՝ դա պետք անմիջապես հաջորդեր քաղաքական հայտնի իրադարձություններին:

Բոլոր դեպքերում, Ռազմավարությունում առանձնացվել և խնդրահարույց են համարվել երկու իրավակարգավորումներ՝ 1) Սահմանադրական դատարանի անդամների լիազորությունների շարունակականությունը՝ ի տարբերություն Վճռաբեկ դատարանի անդամների և բ) Բարձրագույն դատական խորհրդի որոշումները բողոքարկելու անհնարինությունը:

Ընդ որում, այս մոտեցումները ներկայացված են իբրև անվիճելի ճշմարտություններ, սակայն այս դեպքում, նախ անտեսվել է, որ չէր կարելի խախտել Սահմանադրական դատարանի անդամների անփոփոխելիության սկզբունքը, մինչդեռ՝ Վճռաբեկ դատարանի պարագայում խոսքը բացառապես նախագահների մասին է, որոնք, չընտրվելու դեպքում, շարունակում են մնալ դատավոր: Ընդ որում, Սահմանադրությունը երբեք նախագահների համար անժամկետ պաշտոնավարման հիմքեր չի սահմանել: Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումներին, ապա այն ևս միանշանակ չէ, քանզի այժմ էլ կան բազում երկրներ, որոնցում կամ այդ մարմինները դիտարկվում են, որպես բարձրագույն դատական ատյաններ, որոնց ակտերը վերջնական են և բողոքարկման ենթակա չեն, կամ այդ խորհուրդների միջնորդությունների հիման վրա որոշումներ են կայացնում բարձրագույն դատական ատյանները:

Քանի որ սահմանադրական բարեփոխումների ուղղությունների մե ներառված է նաև Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման վերանայումը, մնում է հուսալ, որ դատավորները կկազմեն մեծամասնություն:

Բայց վերը նշված հարցադրումներն այնքան էլ էական չէ, ամենակարևորն այն է, որ ոչ մի պարագայում չպետք է սահմանադրական բարեփոխումների անվան տակ դադարեցվեն Սահմանադրական դատավորների լիազորությունները: Այո, Սահմանադրությամբ կարող են ամրագրվել այդ դատական ատյանի կազմավորման նոր կարգ և ժամկետներ, սակայն դա բնավ չի նշանակում, որ դրանք պետք է անհապաղ կիրառվեն ուժի մեջ մտնելու պահից՝ իբրև սահմանադրի նպատակի իրացում: Սա կարող է դառնալ չափազանց վտանգավոր նախադեպ, որի դեպքում 3 տարին մեկ հնարավոր կլինի փոխել Սահմանադրական դատարանի կամ մյուս դատական ատյանների կազմավորման կարգը և արհեստականորեն դադարեցնեն գործող դատավորների լիազորությունները,

- ընտրական իրավունքի իրավական հիմքերի մասին հարկ է միայն նկատել, որ հարկ է հստակեցնել բարեփոխումների վեկտորները: Ցավոք, բոլոր փոփոխության ենթակա ինստիտուտները և դրույթները ձևակերպված են ,անհրաժեշտ է վերանայելե խիստ վերացական արտահայտությամբ: Օրինակ, ընտրագրավի վերանայման մասին խոսելիս ոչ միայն հարկ է ճշտել դրա չափը

մեծացնելու կամ փոքրացնելու մասին, այլև հարկ է հստակեցնել գրավի գումարի ձևավորման եղանակը, մասնավորապես, որպեսզի այն չգնահատվի, որպես գույքային ցենզ, նպատակահարմար է, որ դրա ձևավորմանը մասնակցեն թեկնածու կուսակցության համակիրները՝ պահպանելով նվազագույն չափը,

- դատավորների թեկնածուների քննության ընթացակարգերի թափանցիկության, արդյունքների բողոքարկման և նմանաբնույթ այլ հարցադրումների առնչությամբ Ռազմավարության դրույթները վիճահարույց չեն, դրաք նաև արտացոլված են եղել նաև Բարձրագույն դատական խորհրդի հայեցակարգում, ինչպես նաև Կառավարության գործունեության 2019 թ. ծրագրում,

- խիստ վիճահարույց է Փորձագիտական ծառայություններ մատուցող պետական մարմիններում ընդգրկված ստորաբաժանումների միավորման գաղափարը: Այն կիրառվել է Վրաստանում և արձանագրել խիստ բացասական հետևանքներ, մասնավորապես, հնարավոր չի լինում ապահովել անհրաժեշտ մրցակցություն և բացառել կոռուպցիան այդ ոլորտում: Ընդ որում, միավորումը չի կարող նպաստել ծանրաբեռնվածության նվազմանը, ինչի մասին հավաստվում է Ռազմավարությունում,

- վարչական դատավարության առնչությամբ խնդիրը բնավ սեղմ ժամկետներ սահմանելը չէ, քանզի դա ինքնըստինքյան չի վերացնում ծանրաբեռնվածությունը: Խնդիրը անհարկի այնպիսի դատական գործընթացների վերացման պահանջն է, որոնք անհարկի ծանրաբեռնում են դատավարության գործընթացները՝ որևէ ազդեցություն չունենալով արդարադատության որակի վրա: Օրինակ, վարչական մարմինների կողմից դատական ակտերի պահանջները չկատարելը հարկ է ինքնըստինքյան հիմք համարել վարչական մարմնի դիրքորոշումը չապացուցված համարելու համար, ոչ թե մտածել, թե ինչպես երաշխավորել այդ պարտականության կատարումը,

- Ռազմավարության առանձին կետեր առնվազն օրինագծերի տեսքով արդեն իսկ կատարված են, ուստի անհասկանալի է, թե ինչու են դրանք ներառված: Այսպես, մշակվել և Կառավարություն է ներկայացվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագիծը, որով արդեն իսկ արտացոլված են Ռազմավարության բոլոր խնդիրները և այլն:

***ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
սահմանադրական իրավունքի ամբիոնի  
պրոֆեսոր Գևորգ Դանիելյան***

**Քաղաքացիական դատավարության ամբիոն  
Ավարտական աշխատանքներ**

<b>Ուսանող</b>	<b>Թեմա</b>	<b>Ղեկավար</b>
Անտոնյան Տաթևիկ	Դատական ակտերի հասկացությունը և դասակարգումը	Վ.Հովհաննիսյան
Արշակյան Նարեկ	Միջանկյալ դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացման առանձնահատկությունները վարչական դատավարությունում	Լ.Պետրոսյան
Եղոյան Ջուլիետա	Ապացուցելուց ազատվելու հիմքերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում	Ս.Մեղրյան
Խունդկարյան Հենրիկ	Վարչական դատարանի ընդդատության սահմանազատման օրենսդրական չափանիշները և դրանց կատարելագործման ուղիները	Տ.Խաչիկյան
Թանգամյան Վահագն	Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները վարչական դատավարությունում	Տ.Խաչիկյան
Օհանյան Էմմա	Վճռաբեկ դատարանի մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու սահմանադրաիրավական խնդրի իրացումը քաղաքացիական դատավարությունում	Վ.Հովհաննիսյան
Աղինյան Անուշիկ	Լուսանկարները, ձայնագրություններն ու տեսագրությունները որպես ապացուցման միջոց ՀՀ քաղաքացիական դատավարությունում	Վ.Եսայան
Համբարձումյան Նարե	Դատական ծանուցումները քաղաքացիական դատավարությունում	Ա.Ղարսյան
Մեսրոպյան Միլենա	Վճռաբեկ բողոքարկման իրավունքը և դրա իրականացման կարգը	Պ.Թադևոսյան
Մուշյան Արտյոմ	Վերաքննության սահմանները քաղաքացիական դատավարությունում	Ա.Ղարսյան
Գրիգորյան Սյուզաննա	Արդար դատաքննության իրավունքը քաղաքացիական դատավարությունում	Լ.Պետրոսյան
Գյուլասարյան Ադամ	Գործը դատաքննության նախապատրաստելը որպես	Ա.Ղարսյան

	քաղաքացիական դատավարության փուլ	
Գևորգյան Լիլիթ	Հեռակա դատաքննության ինստիտուտը քաղաքացիական դատավարությունում	Վ.Եսայան
Հովհաննիսյան Հայկ	Արագացված դատաքննությունը քաղաքացիական դատավարությունում	Վ.Դավլաբյան

**Մագիստրոսական թեզեր**

Նավասարդյան Ինգա	Դատական հայեցողությունը քաղաքացիական դատավարությունում	Վ.Եսայան
Թորոսյան Նարինե	Մնանկության վարույթում ֆինանսական առողջացման ծրագրի դատավարական ընթացակարգերը (ներկայացումը, պայմանները հաստատման կարգը, հետևանքները վաղաժամկետ դադարեցումը, ավարտը):	Գ.Ավագյան
Մանուկյան Կառմեն	Պարզեցված վարույթը քաղաքացիական դատավարությունում	Ս.Մեղրյան
Ավագյան Գոհար/գործ/	Գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե /ex officio/ պարզաբանելու սկզբունքը և դրա կիրառման ընթացակարգային հիմնախնդիրները վարչական դատավարությունում:	Տ.Խաչիկյան
Դավթյան Դավիթ	Մնանկության կառավարիչը որպես սնանկության գործերով վարույթի սուբյեկտ	Գ.Ավագյան
Խաչատրյան Մերի	Գործերի քննության կարգն առևտրային արբիտրաժում:	Վ.Հովհաննիսյան
Հովհաննիսյան Արամ	Պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու համար:	Տ.Խաչիկյան
Սարգսյան Էլեն	Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները վարչական դատավարությունում:	Վ.Դավլաբյան
Ստեփանյան Ահարոն	Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ գործերով վարույթի հիմնախնդիրները	Վ.Դավլաբյան
Բարսեղյան Նոնա	Խտրականության բացառման սկզբունքը աշխատանքային	Տ.Վարդազարյան

	օրենսդրությունում:	
Գճիրյան Տաթևիկ	Իրավաբանական անձանց սնանկության առանձնահատկությունները	Գ.Ավագյան
Սրապյան Ջուլիետա	Մնանկության գործերի քննության և լուծման դատավարական կարգի առանձնահատկությունները	Գ.Ավագյան

**Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն  
Ավարտական աշխատանքներ**

Անտոնյան Լիլիթ Քաջիկի	Այլընտրանքային խափանման միջոցների օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները:	Դ. Ավետիսյան
Բաբայան Լիլիթ Արտակի	Վկայի ցուցմունքը որպես ապացուցման միջոց:	Ա.Դանիելյան
Գալոյան Գայանե Կարենի	Հարկադրանքի կիրառման սահմանների թույլատրելիությունը քննչական գործողությունների ընթացքում	Դ. Մելքոնյան
Գալստյան Անի Ռուբենի	Մրցակցության սկզբունքի կենսագործումը ապացուցման գործընթացում	Դ. Ավետիսյան
Դարմանյան Գոռ Հրաչյայի	Տուժողի քրեադատավարական վիճակը ՀՀ քրեական դատավարությունում	Ս. Դիլբանդյան
Հովհաննիսյան Լուսինե Տիգրանի	Պաշտպանի լիազորությունների կենսագործման ապահովումը՝ որպես քր. դատավարությունում մրցակցության սկզբունքի ապահովման երաշխիք	Տ. Սուջյան
Մաղաքյան Աննա Արմենի	Դատավարական ժամկետների կանոնակարգումը որպես քրեական դատավարությունում անձի իրավունքների պաշտպանության երաշխիք	Տ. Սուջյան
Մարգարյան Նարեկ Գագիկի	Քրեադատավարական օրենքի էական խախտումը որպես դատական ակտի բողոքարկման հիմք:	Դ. Ավետիսյան
Միրզախանյան Իգոր Արթուրի	Անձեռնմխելիությունից օգտվող անձանց քրեական հետապնդումը	Ա. Հովհաննիսյան
Ներսիսյան Կարեն	Նախնական քննության ավարտումը մեղադրական եզրակացությամբ	Ն.Աղաբաբյան

Անդրանիկի		
Այվազյան Կարեն Արծրունի	Վարույթը բացառող հանգամանքների արդի հարցերը ՀՀ քր.դատ.ում	Ա. Դանիելյան
Արսենյան Վարդան Սամվելի	Անձի իրավունքների ապահովման երաշխիքները բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթում:	Ռ. Մելիքյան
Թորոսյան Արևիկ Շիրակի	Վճռաբեկ վերանայումը՝ որպես դատական պաշտպանության իրավունքի ապահովման երաշխիք	Ս.Դիլբանդյան
Հովակիմյան Հրայր Ներսիկի	Անչափահասին վերագրվող հանցագործության վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները	Ս. Մարաբյան
Հովհաննիսյան Անի Վլադիմիրի	Փորձագետի կարգավիճակը քրեական դատավարությունում	Վ.Ենգիբարյան
Մարտիրոսյան Էդգար Արմենի	Դատախազի կողմից առաջին ատյանի դատարանում մեղադրանքից հրաժարվելը կամ մեղադրանքը փոփոխելը:	Տ.Սուջյան
Մուրադյան Էդմոնդ Աշոտի	Վճռաբեկ դատարանում դատական ակտի բողոքարկման հիմքերը:	Ա. Հովհաննիսյան
Նորսոյան Պարույր Սամվելի	Իրեղեն ապացույցները քրեական դատավարությունում	Ս. Դիլբանդյան
Սարգսյան Հայկ Աշոտի	Օրենքով պահպանվող գաղտնիք կազմող տեղեկատվության նկատմամբ նախնական դատական վերահսկողության հիմնահարցերը ՀՀ քր.դատ.ում	Ա. Դանիելյան
Քալանթարյան Աննա Գարեգինի	Նոր և նոր երևան եկած հանգամանքներով վերջնական դատական որոշումների վերանայման հիմնահարցերը:	Ա.Հովհաննիսյան
Հայրունի Տիգրան	Քրեական վարույթի ընթացքում դատավարական սանկցիաների կիրառման հիմքերը, պայմանները և կարգը	Ս. Դիլբանդյան

### Մագիստրոսական թեզեր

Մուրադյան Հրանտ	Դատախազի կողմից մեղադրանքից հրաժարման լիազորությունը և	Դ. Մելքոնյան
-----------------	--	--------------

	դրա հետևանքները ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի	
Մարտիրոսյան Լիլիթ	Անչափահաս տուժողների իրավունքների և օրինական շահերի ապահովման հիմնախնդիրները քրեական դատավարությունում:	Ս.Մարաբյան
Պետրոսյան Լևոն	Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը և դրա ապահովման երաշխիքները ՀՀ քր.դատ.ում	Ա.Հովհաննիսյան
Պապոյան Զարուհի	Դատական վերահսկողության սահմանների և քրեական վարույթի քննության արդյունավետության հարաբերակցությունը	Ա. Դանիելյան
Գասպարյան Կլարա	Միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում	Ա. Դանիելյան
Հակոբյան Լիդա	Անմեղսունակության վիճակում քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձի դատավարական վիճակի հիմնախնդիրները ՀՀ քր. դատ.ում	Տ. Սուջյան
Խոնդկարյան Էլեն	Դատավարական ժամկետների կանոնակարգումը որպես քրեական դատավարությունում անձի իրավունքների պաշտպանության երաշխիք	Ա. Հովհաննիսյան
Ոսկանյան Սեդա	Քրեական վարույթի ընթացքում անձանց անվտանգության ապահովման հիմնախնդիրները	Տ.Սուջյան
Մաթևոսյան Արման	Արդարացման դատավճռի էությունը և նշանակությունը քրեական դատավարությունում	Վ.Ենգիբարյան
ՈՒՆուսյան Արմենուհի	Նախնական դատական լսումների ինստիտուտը ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի	Ս. Դիլբանդյան
Նահապետյան Ռաֆայել	Վարույթի հանրային մասնակիցների գործառույթային փոխհարաբերությունները և նրանց վարութային պատասխանատվության սահմանները	Ս. Դիլբանդյան
Վերոյան Վարդան Գագիկի	Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանի լիազորությունները	Ս.Դիլբանդյան
Սահակյան Մերինե	Դատախազի կողմից մեղադրանքից հրաժարման լիազորությունը և դրա հետևանքները ըստ գործող օրենսգրքի և ՀՀքրեական դատավարության օրենսգրքի նախագծի	Ս.Դիլբանդյան

Հակոբկոխյան Հակոբ	Քրեական գործով վարույթը կասեցնելու հիմքերը, դատավարական և բողոքարկման հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում	Վ.Ենգիբարյան
-------------------	---	--------------

**Քաղաքացիական իրավունքի ամբիոն  
Ավարտական աշխատանքներ**

Բարսեղյան Տարիել Տիգրանի	Գործարար համբավի քաղաքացիաիրավական պաշտպանությունը	Ա.Թավադյան
Գրիգորյան Տիգրան Կարենի	Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր	Ս.Թևանյան
Դանիելյան Հայկ Հովհաննեսի	Պետական և համայնքային սեփականության մասնավորեցման եղանակները	Վ Ավետիսյան Ա.Մութաֆյան
Կիրակոսյան Սվետլանա Մերժիկի	Ֆիլմի իրավական պաշտպանության առանձնահատկությունները	Արփինե Հովհաննիսյան
Հարությունյան Կարոլինա Ղուկասի	Համակարգչային ծրագրերի պաշտպանությունը և դրանց նկատմամբ իրավունքների փոխանցումը ՀՀ օրենսդրությամբ	Արփինե Հովհաննիսյան
